ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԵՍ ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ

Ազգիս Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, հունիսի 9-ին, շաբաթ, ժամը 1-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, տեղի ունեցավ հիշատակի հանդես՝ նվիրված Մեծի Տանն Կիլիկիո հանգուցյալ երանաշնորհ Տ. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի մահվան տասներորդ տարելիցին։

Հանդիսությունը ներածական խոսքով բաց արեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արրահամյանը։

Հոգևոր Ճեմարանի երգչախումբը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պալյանի ղեկավարությամբ, կատարեց «Որք զարգարեցին», «Ամանեալ Մովսիսի», «Գթա Տէր», «Էջ Միածին ի Հօրէ» շարականները։ Բ դասարանի ուսանողներ Գրիգոր Բունիաթյանը և Ղևոնդ Վարդանյանը արտասանեցին, առաջինը՝ Վ. Տերյանի «Մի՞թե վերջին պոետն եմ ես իմ երկրիս» և երկրորդը Մ. Մեծարենցի «Կիրակմուտք»-ը։

Այնուհետև Տ. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի կյանքին, հայրենասիրական գործունեության, բանասիրական և գիտական վաստակին նվիրված ընդարձակ և բովանդակալից զեկույցով հանդես եկավ «Էջմիածին» ամսագրի խմբագիր և Ճեմարանի դասախոս Արթուն Հատիտյանը, որ լսվեց լարված ուշադրությամբ։

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Գևորգյան Ճեմարանի նախկին ուսանող դոցենտ Ա. Տիրացյանը իր հուշերը պատմեց Տ. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի մասին։

Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետը, ողբկոչելով հիշատակը Մայր Աթոռի միաբան, հայ մշակույթի մեծ վաստակավոր երանաշնորհ Տ. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի, որ «Իր շուրջիններուն և նամայն մեռազն ժողովրդին, բուռ-բուռ բաշխեց Ս. Ավետարանի լույսը՝ ճուռ խոսքերով, ճուռ ավյունով», հորդորեց Մայր Աթոռի երիտասարդ միաբաններին և մանավանդ Հոգևոր Ճեմարանի իր հոգևոր դավակներին՝ ընթանալ երջանկահիշատակ Տ. Գարեգին Կաթողիկոսի անցած Հայ Եկեղեցուն, հայ ժողովրդին և Մայր Հայրենիքին ծառայելու ճանապարհով։

Հանդիսությունը վերջացավ խմբովին երգված Տերունական աղոթքով։

Կիրակի, հունիսի 10-ին, Հոգեգալստյան տոնին, Մայր Տաճարում, եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արրահամյանը։

Պատարագիչ սրբազանը «Հայր մեր»-ից առաջ ընթերցեց Վեհափառ Հայրապետի մարտ 12 թվակիր սրբատառ կոնդակը՝ Տ. Գարեգին Կաթողիկոսի մահվան տասներորդ տարելիցը նշելու մասին։

Այնուհետև պատարագիչ սրբազանը քարոզեց «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս» թնաբանով (Ղուկ. Դ. 17)։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսագրությամբ, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ երանաշնորհ Տ. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի մահվան տասներորդ տարելիցի առթիվ։

Արդարև, շատ ճիշտ է գրել Վեհափառ Հայրապետն Իր կոնդակում. «Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց կենդանի է մեր կյանքին մեջ, մեր հոգիներեն ներս, և Իր անուշը սուրբ կպահվի Ս. Էջմիածնի լույսերուն մեջ»։

«Յաւիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։